




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

16075

1924

355.48

U-95

35548

6 95

Պրոխսարներ, բոլոր յերկրների միացեալ

«ԲԱՆՎՈՐ»-Ի ԳՐԱԴԱՐԱՆ № 12

Յ-ՐԴ ԿՈՎԿԱՍՅԱՆ
ՀՐԱՑԱՆԱԶԻԳ ԴԻՎԻԶԻԱՅԻ
ՏՈՆԸ

2010

Լենինականի, Տեղական Տնտեսութեան բաժնի տպարան.

1924 թ. Նոյեմբերի 7-ին

38536

Հոկտեմբերյան հեղափոխութեան 7-րդ տարեդարձի հետ 3-րդ Կովկասյան Հրացանաձիգ Դիվիզիան տունում ե նաև իր տարեդարձը Կովկասյան 3-րդ Դիվիզիան իր ուղեգրական ուղին ըսկսել ե Պենզայից, այն ժամանակ, յերբ Արեւելյան Ռուսաստանի հակահեղափոխութեան առաջին ամպերը կախվել էին Վոլգայի շրջանի վրա, և Չեխ-սլովակները հակահեղափոխական կորպուսը, վորպես սև վոլթորիկ, շարժվում եր դեպի Ուրալի խորքերը. յերբ Սամարայում գլուխ եր բարձրացնում Սահմանադիր Ժողովի մնացորդների և նրա զորքերի (ժողովրդական բանակի) հակահեղափոխական շարժումը, և յերբ մեզ վրա էին գալիս Ուրալի և Որենբուրգի կողակները: Կարճ ժամանակում հեռու արևելքում բարձրացավ Սիբիրի առջայիկի (ցարիկի) — ադմիրալ Կոլչակի — ուրվականը:

Սոսկալի մի ժամանակ եր Խորհրդային հանրապետութեան համար: Ազմված հակահեղափոխական կրակի մեջ, ներքին քաոս, մեկը մյուսին հաջորդող ապստամբական բռնկումներ... Այդպիսի մի ժամանակ միայն ամենաանձնվեր հերոսներն էին դուրս գալիս Խորհրդային հանրապետութեանը պաշտպանելու: Այդպիսի խիզախ, բանվորազյուղացիական գործին նվիրված սակավաթիվ զինուորացիներ, կազմվեց ու հասունացավ Պենզայի, հետագայում 20-րդ, ներկայումս 3-րդ Կովկասյան Հրացանաձիգ Դիվիզիան:

Ուժքեր էին այդ առաջին, արտաքուստ գեռ թույլ կարգապահութեամբ, բայց ներքուստ ուժեղ հոգով և մի-

ձույլ կամավորական գնդերում. ինչն եր վոգևորում նը-
րանց դիմել դեպի մահ և հաղթանակ:

Հին բանակի զինվորներ, պատերազմի հետևանքով
քար ու քանդ յեղած գյուղացիներ, չքավորներ, վորոնք
կրել եյին ցարիզմի և պատերազմի դառն տանջանքներն
ու անարդարությունները. նավաստիներ, պատրաստ զոհ-
վելու հեղափոխության համար, Պենգայի և Խորհրդա-
յին իշխանության այլ քաղաքների բանվորներ, կոմու-
նիստներ, վորոնց կուսակցական պարտքը մղում եր առա-
ջին շարքերը: Դրանք բոլորը վոգևորված եյին մի մտքով՝
հաղթել կուլակ՝ գեներալական հակահեղափոխությանը:

Ահա այդ ազատված ստրուկներից եր, վոր հետագա-
յում կազմակերպվեցին Կարմիր գնդերը, վորոնք ահ ու
սարսափ եյին տարածում իրենց թշնամիների վրա, ավե-
լացնելով Դիվիզիայի ռազմական փառքը:

Արևելյան Փրոնտը՝ այդ մի ամբողջ դարաշրջան ե
20-րդ Հրացանաձիգ Դիվիզիայի կյանքում: Պենգայից Սա-
մարա—Սիգրան տանող ճանապարհները, յերկաթուղու
հանգույցները 300 վերստանոց մի Փրոնտ եր, վոր մի
թևով հենված եր Որենբուրգի և մյուսով Ուֆայի վրա:
Հարավային Ուրալի վայրենի լեռներում և տափարակներում
գնում եր կռիվը փոփոխակի հաջողություններով ու պար-
տություններով: Նահանջներ ու հարձակումներ, յերբեմն
վոտաբուրիկ, տկլոր՝ ցուրտ ձմեռը և գարնան հալոցին, զո-
րամասերի շարժումները ոգնության հասնելու նպատակով
պաշարված Որենբուրգին, անագորույն և կատաղի կռիվ-
ներ հակառակորդ բանակի, վայրենի բնության և պար-
տիզանական խմբերի (բաշկիրների) դեմ, սպիտակ բանա-
կայինների վայրագությունները, աիֆը և ուրիշ հիվան-
դությունները, Կոլչակի հարավային բանակի ջարդը, Ու-
րալի գրավումը, ամբողջ Հարավային Ուրալի մաքրումը
թշնամիներից, ահագին քանակությամբ՝ ամբողջ Դիվիզիա-
ներով գերինները, ահագին պատերազմական ավաճների գրա-
վումը, և այս բոլորից հետո ազգաբնակչության ուրախ

դիմավորումը Կարմիր բանակին, Ակադուբինսկի տափառ-
տաններում Թուրքեստանի Կարմիր բանակի հետ միանալը...
Յեվ այժմ այդ ամբողջ աշխատանքի և քաղաքացիական
կռվի անցյալի հեռանկարում Արևելյան Փրոնտը ինձ պատ-
կերանում ե մի դպրոց, ճիշտ ե, շատ դաժան և արյու-
նալի, վորի մեջ կռիվեց Դիվիզիայի յերկաթյա վոգին,
կամքը՝ կռվելու և հաղթելու, ուժեղ ընկերական միա-
ձույլ կապը և այն անվերջ հավատը դեպ իրենց ուժերը
և ճշմարտությունը, վորը հատուկ եր Դիվիզիայի ամեն
մի կարմիր բանակայինի: Դրանից հետո չեւ կարող լինել
ավելի դժվար և անել դրություն, վորի մեջ նա գտնված
լիներ:

«Քսաներորդական» կարմիր բանակայինը, հպարտ
ու ինքնավստահ, ձուլված ամբողջապես մի կտոր պող-
պատից, արհամարհելով մահը, լի ատելությամբ դեպի
թշնամին, պատրաստ եր ամեն ինչի՝ հանուն Խորհրդային
իշխանության և Կոմունիստական կուսակցության հաղ-
թանակի:

Առաջին մեծ հաղթանակը Կոլչակի դեմ, ավելի շուտ
Կոլչակի բանակի փաստորեն անկումը, վերջնականորեն
ամրացրեց նրա բնավորության և գիտակցության մեջ
այն ամենը, ինչ յերկու տարվա խիզախ քաղաքացիական
կռիվը ներշնչել եր նրան: Նա (կարմիր բանակայինը)
քաղաքացիական կռվի վոգևորության ամենաբարձր մար-
մնացումն եր այն ժամանակ, յերբ Դենիկինյան Փրոն-
տում դեռ լայնանում եր մեր զորամասերի քայքայման
պրոցեսը: Յեվ զլխավորը՝ այդ՝ դասակարգային առավե-
լության զգացմունքն ե թշնամու հանդեպ... Այդպես եր
նա, յերբ արևելյան Փրոնտից վերադարձավ հարավ-արևե-
լյան Փրոնտը:

Դ Ե Ն Ի Կ Ի Ն Ի Դ Ե Մ

Կոլչակի հարավային բանակը ջարդելուց, Ակադու-
բինսկը գրավելուց և Թուրքեստանի Կարմիր բանակի հետ

միանալուց հետո՝ շատ դիվիզիաներ ազատվեցին ռազմական աշխատանքից: Ազատվեց նաև 20-րդ դիվիզիան: 5-րդ բանակը միայնակ կոլչակի ջարդված զորքին հալածում էր գեպի Սիբիրի խորքերը:

Դենիկինի գեթ Ֆրոնտում մեր գրությունը վատթարացավ. գեներալները հարավից հետգնառե շարժվում էին գեպի Խորհրդային հանրապետութան կենտրոնը:

Դիմացկուն գնդեր շատ քիչ կային: Մամենտի չափազանց լրջությունը ակներև էր: Արևելյան Ֆրոնտից շտապ տեղափոխվում էին զորամասեր:

20-րդ Դիվիզիայի տեղափոխվող մասերի տրամադրությունը շատ բնորոշ էր: Յերգերով անցնելով իրանց հայրենի տեղերից, նրանք վոչ մի դասալիք չէին թողնում. նույն իսկ հիվանդները հետ չէին մնում եշալոններից. տեղի էին ունենում շատ միջադեպեր ուրիշ զորամասերի կարմիր բանակայինների հետ, վորոնք յենթարկվում էին ընդհանուր հուսահատական տրամադրության: Բուռն հեղափոխական հոսանքը գրավում էր բոլորին:

Հաբավարներևյան Ֆրոնտը անսիրալիք կերպով ընդունեց «20-ականներին»: Մի բրիգադա միայն յեկավ (2-րդը), այն էլ անմիջապես գնացքից ուղարկվեց գեպի Դոնի ավազանները, հակառակորդի դեմ, վորն իր գերակշռող հեծյալ զորամասերով հարձակման էր դիմել: Այդ կոիվները, վոր տեղի ունեցան Զյորնայա Պոլյանայի մոտերքում, վողրերգական և ամենահերոսական եջն է կազմում Դիվիզիայի պատմության մեջ:

Առանց հրետանու (արտիլերիա) ոգնության, վառված վոգեվորությամբ, հաշվի չառնելով հակառակորդի գերակշիռ ուժն ու բնության աննպաստ պայմանները, կովում և ընկնում էին Դիվիզիայի ամենալավ մասերը, միայն թե իրենց մահով ապացույցանեն իրենց գնդի քաջությունըն ու փառքը: Առաջ բերենք մի քանի բնորոշ գծեր այդ կոիվներից: Զորս կողմից կտրված հակառակորդի հեծելա-

զորքով, մի քանի զորամասերի մնացորդները վերջ ի վերջո ստիպված յեղան ցած դեկ իրենց զենքերը:

Յերբ հակառակորդները նրանց տանում էին իրենց թիկունքը և ճանապարհին կանգ առան հանգստանալու, գերի կարմիր բանակայինները հանկարծ գրավեցին իրանցից խած զենքերը և դուրս յեկան զինված կողակների ողակի միջից, կովելով հրացանի կոթերով, բռնեցքներով և կրակելով գլխը կորցրած պահակների վրա: Նույն գնդի 5-րդ շոկատը, հալածվելով թվով անհամեմատ գերակշիռ կողակներից, մտնում է ճահիճները և կովում է ամբողջ ուրերով, մինչև վոր վերջին բանակայինն անգամ ընկնում է:

Սոված, տկուր, ցրտից դողալով, վիզը մինչև ջրի մեջ՝ այդ շոկատը հերոսաբար դիմադրում էր հակառակորդի բոլոր փորձերին, վոր ուզում էր նրանց գերի վերցնել, և յերկար դիմադրելուց հետո ընկավ այդ շոկատը հերոսի մահով մինչ վերջին բանակայինը, բայց ցած չգրեց իր զենքը: Այդ գնդի հրամանատարը ընկ. Դոլինին ավելի լավ համարեց վերջ տալ իր կյանքին ինքնասպանությամբ, քան թե կենդանի ընկնել սպիտակների ձեռքը:

175 հր. «Ընկ. Տրոցկու» գնդի գումարտակի կոմիսարը գերությունից փախչելով պատմեց, վոր յերբ գերիները հրաժարվել են մատնել կոմունիստներին, նրանց միջից 16 հոգու առանձնացրել են գնդակահարելու, և ահա գնդակահարելու մոմենտին կենդանի մնացածները սկսել են յերգել «Դուք զոհ գնացիք»: Դահիճ-ոֆիցիերը, վորը գերակավարում էր գնդակահարությունը, կախեց գլուխը և նազանը և սպասեց մինչ յերգեցողությունը վերջացնեն: Շատ գերիներ գնդակահարվեցին: Կողակները մեր Դիվիզիային անվանեցին «յերկաթե կոմունիստական» և անխտիր գնդակահարում էին բոլոր գերիներին: Հրամանատարներից և կարմիր բանակայիններից շատերը վերջ տրվեցին իրենց կյանքին, չցանկանալով կենդանի գերի ընկնել, Ընկան համարյա թե բոլոր կոմ. հրամանատարները

176, 177 գնդերի և 175-ի յերկու յերրորդականը. ընկան և շատ կարմիր բանակայիններ:

Չնայելով վոր բրիգադան հարևան զորամասերից ոգնություն չստացավ, այնուամենայնիվ նա իր գործը արեց. նա դիմադրեց և չթողեց, վոր Ֆրոնտը ճեղքվի հակառակորդի հարձակմամբ, առաջ բերելով տրամադրություն թշնամու գործի քայքայման և միանգամայն գրավեց հարևանների և թշնամու հարգանքը:*) Այս մոմենտից թշնամու հետեւողական փորձերից և վոչ մեկը չեւ կարողանում փութել դրությունը: Դիվիզիայի առաջին արյունը, վորը առատորեն թափվեց Դոնի ավազուտներում, վերջ տվեց թշնամու հետագա առաջխաղացմանը. շուտով սկսվեց Դենիկինյան գործի քայքայումը, բայց իրենք, Ֆրոնտում գտնվողները, այդ դեռ չեյին նկատում. ընդհակառակը. տաքացած իրենց հաջողությամբ, գեներալները տաքացնում էյին իրենց սպիտակ ձիերը Մոսկվա մտնելու, և շատ փոքրոգիներ սոսկում էյին դրանից:

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՇԱԲԱԹ

Այդպիսի ծանր կացության մեջ, մի շարք մանր, բայց համառ կռիվներից հետո, գտնվելով մի շաբթով թիկունքում, Որչեդինսկայա, Գոլուբինսկայա և ուրիշ կայարանների մոտ, Մեզվեդիցա գետի ուղղությամբ, Դիվիզիան անց կացրեց կուս. շաբաթ: Ամենադժվար մոմենտին, յերբ թշնամին մոտենում եր Մոսկվային, կոմունիստական կուսակցությունը լայն բաց եր արել իր դռները և հրավիրում եր բոլոր ազնիվ ու կայուն բանվորներին ու գյուղացիներին գեպի իր շարքերը: Ահեղ վտանգը ամենալավ միջոցն եր ազատվելու փոքրոգիներից, թուլերից և այնպիսիներից, վորոնք ուրիշ լավ պայմաններում մտնում էյին կուսակցության շարքերը շահադիտական նպատակով: Պետք եր լինել ականատես կարմիր բանակայինների տը-

*) Հասնում և 3-րդ բրիգադան և դրությունը վերականգնում:

րամադրության և նրանց տենդային աշխատանքին այդ շաբաթը:

Անկուսակցականների և կուսակցականների միջև յեղած անջրպետը վերցվեց, անկուսակցականներ այլևս չը կային, կուսակցության մեջ էյին մտնում համարյա բոլորը (բացառությամբ գումակում գտնվող ծերերի և նրանց, ովքեր իրենց ընտանիքների մասին էյին մտածում), խորը գիտակցելով վտանգը և կուս. պարտականությունը, վորը պահանջում եր լինել վտանգի ժամանակ առաջինը, որինակ ծառայելով ուրիշներին:

Ամեն որ կայանում էյին ժողովներ, ուր գունդը ամբողջապես լարված լսում եր զեկուցում ապագա կոմունիստական կարգերի մասին, կուսակցության ծրագրի և տակտիկայի մասին՝ 5—6 ժամ անընդհատ: Այսպես եր ահա Դիվիզիայի ամբողջ մթնոլորտը: Ահա թե ինչու զարմանալի չե, վոր կուսակցական շաբաթը, տեւելով ընդամենը 4—5 որ (այդպիսի նոր ռազմական հրաման եր ստացված), արձանագրվելով այն ամենը, ինչ կատարվեց իրոք—տվեց 75—80 տոկոս կուսակցականներ ամբողջ Դիվիզիայի կազմից: Անկուսակցականների տոկոսը ընկնում եր գլխավորապես թիկունքի և գումակի (արդ) վրա, ուր աշխատանքը շատ թույլ եր տարվում և կազմն ել ավելի թույլ եր, վորովհետեւ գումակի աշխատանքը պարտադիր չեւ և հաճախ այնտեղ նշանակվում էյին հերթով:

ՄԵԴՎԵԴԻՑԱ-ԴՈՒԲՈՎԿԱ ԳԵՏԸ. ՍԱԴԿԻ ԽՈՒՏՈՐ

Հրաման ստացվեց, վոր Դիվիզիան շտապ անցնի Կաչալինսկայա կայարանը, ուր սպանում եր հակառակորդի ներս խուժումը, բայց դեռ այդտեղ չհասած, վորովհետեւ այդ կայարանը հակառակորդը զրավել եր, Դիվիզիան նոր հրաման ստացավ՝ առանց հանգստանալու շարժվել դեպի Վոլգա (Մ. Դուբովկա). պատճառն այն եր, վոր հակառակորդը իր հեծելազորով պատռել եր մեր թիկուն-

բը և մյուս Դիվիզիաները անկանոն հետ ելին նահանջում, բայց անելով հակառակորդի համար ճանապարհ կամրջին և Արշեղու կայարանները:

20-րդ Դիվիզիայի անելիքը հետևյալն էր: Անցնել Կորպուսի թիկունքը և այդպիսով ստիպել նրան հետ նահանջել: Այդ արտակարգ դժվար անցումը առանց գուժակի և հետևապես առանց պաշարի անցնել Դուբովկա հեծելազորքի թիկունքը և ապա վերադառնալ Դոն, փաստ է Դիվիզիայի նոր քաջագործությունը: Սովից ընկավ մոտ 600 ձի, չհաշվելով դեռ ուրիշ բաներ, մոտ մի շաբաթ հաց չեր տրվում, ընակչությունն էլ շատ քիչ ունեւր, բայց «20-դականները» չեյին վհատում—կռիվ ելին գնում գարմոշկայով, յերգերով, կարծես թե վաղ թե գնում ելին հակառակորդի թիկունքը, այլ իրենց ծննդավայր գյուղերը: Յեթե այդ հերոսները այսօր գտնվեյին իրենց հարազատ դիվիզիայում, կպատմեյին և կոգևորեյին նորեկներին: Ամենանշանավոր միջնագետը այդ խուտոր Սադկայի մոտ յեղած կռիվն է:

Դիվիզիայի հեծելազորքը անսպասելի մի գրոհով ջարդեց հակառակորդի մի գունդը միայն, և հակառակորդը զգաց, վոր իր թիկունքին վտանգ է սպառնում: Նա հետ շրջվեց և փոխանակ վերադառնալու դեպի Դուբովկա, ուր սմբողջապես կենտրոնացած էր 20-րդ դիվիզիան, գնաց խուտոր Սադկայի միջով, ուր կանգնած էր դիվիզիայի շտաբը, թեև փոքրաթիվ, բայց հզոր, 180-րդ հրաց. գունդը: Գրոթյանը նպաստում էր հակառակորդին: Հետեւապես 180-րդ հրաց. գունդը պիտի հերոսաբար դուրս գար այդ կացությունից իր համերաշխությամբ և կարգապահությամբ և պատրաստ լինել կռիվի մինչև վերջ:

Այն գլխավորությունը, վոր պարտվելը բոլորի անկումն է նշանակում, կապում էր նրանց սրտերը ընկերական կապով: Թնդանոթային կառավարի կրակից հետո, թշնամին յերեք անգամ գրոհ ավեց և յերեք անգամն էլ ջարդվեց ու հետ քաշվեց: Այդպիսի որերը չեն մոռացվում: Կռիվը վեր-

ջացավ ուշ գիշերը, բայց մինչ առավոտ դեռ գնդացիները չեյին դադարել կարկուտ թափելուց և դեռ յերկար կրակե արշալույսը կախված մնաց գյուղի գլխին: սպասում ելին հակառակորդի հարձակման նոր փորձերին, բայց նրանք արգեն վաղուց հեռացել ելին: Գերիների հարց ու փորձը ցույց տվեց, վոր հակառակորդից ջարդվել էր 4 գունդ, սպանվել և վերավորվել ելին շատ ոֆիցերներ, նրանց թվում նաև ղեկավար գեներալը: Գնդի այս հերոսական հաղթանակը հիշված և հեղինխորհի ընդարձակ հրամանում: Գեներալ Տապրեկովը իրենց պարտությունը վերագրում էր նրան, վոր իրանց զորքը շրջապատված է յեղել «Չուգներով և ընտիր կամուխաններով»:

Կենտրոնի մը այդ հաղթությունն առթիվ նվիրում է մի դրոշ 180-րդ հրաց. գնդին, վորը պահվում է Յ դ Կովկասյան Հրաց. Դիվիզիայի 8-րդ գնդում:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՁԱԿՈՒՄ

1919 թվ. դեկտեմբերի վերջերին սկսվեց մեր բանակի ընդհանուր հարձակումը: Դեռեկինի բանակի ջարդի սկիզբն էր դա: Հակառակորդը գլուխը կորցրած հետ էր գլորվում, և յերեմն միայն, հավաքելով իր լավ զորամասերը, սկսում էր դիմադրել: Հակառակորդի շտապ նահանջը ցույց էր տալիս, վոր նա հարմար տեղ է փնտրում դիմադրելու մեղ, և այդպիսի տեղը հանդիսացավ Մանիչ գետը՝ դժվար անցնելի և թույլ սառչող նույն իսկ ամենախիստ սառնամանիքների ժամանակ: Ահա այդ հանգամանքը մի փոքր անհանգստացնում էր մեզ, վոր մեր հոգնած, բորիկ ու աղիոր զորքը այդ սառնամանիքներին չի դիմանա, նամանավանդ վոր վերկոկնյա ժեսկայա կայարանում հակառակորդը համառ դիմադրություն ցույց տվեց: Թիկունքը տարածվում էր հարյուրավոր վերստեր. հագուստները և կոշիկները մաշվել ելին:

Սկսվեց կոշմարային տիֆը, վորը խից մեր շարքերից ավելի շատ, քան թե կռիվները:

Անհնարին եր ստեղծել տանելի պայմաններ՝ հիվանդ-
ներին գոնե թիկունք զրկելու: Տիֆլ տարածվել եր ամ-
բողջ գյուղերը, թշնամին լավ ժառանգութուն թողեց մեզ,
ահագին թվով տիֆով հիվանդներ թողնում և փախչում
էին: Տիֆլ տարածվում եր հետզհետե ֆրոնտից դեպի
թիկունք:

Յեվ չնայած այդ բոլորին, այնուամենայնիվ հերոսնե-
րի ռազմական հոգին չեր ընկճվում, Վելիկոկնյաժեսկայա
կայարանում մի փոքր հանգստությունից հետո ղեկիզիան
ղիմեց այնտեղ, ուր ամրացել եր հակառակորդի բանակը:

ՄԱՆԸՆԻ ԾՏԱՊ ԱՆՑՈՒՄԸ

Դիվիզիայի առաջին համառ կռիվը Մանըչում անհա-
ջող անցավ: Տալով բավականաչափ զոհեր, թե սպանված և
թե վիրավոր, սառչելով 23 ժամյա կռվում, ղեկիզիան
մյուս առավոտ հետ դարձավ: Յեկատերինովկա և Շար-
լեկա կայարանները մնացին թշնամու ձեռքին, վորը հա-
վաքելով իր վերջին ամենալավ զորամասերը, կատաղի
պաշտպանում եր այդ դիրքերը: Փետրվարի 14-ին միայն,
մի փոքր հանգստանալուց և Դոն-Ստավրոպոլի բրիգա-
դան վորպես զորքի լրացում ստանալուց և մի ամ-
բողջ որ ու գիշեր սառնամանիքում կռվելուց հետո, գի-
շերվա մի գրոհով մերոնք գրավեցին Յեկատերինովկա և
ուպա Տորգովայա կայարանները: Հակառակորդի համառու-
թյունը փշրված եր վերջնականապես և ճանապարհը փակ-
ված. նա դարձել եր մահացու վերք ստացած մի գազան,
վորը պատրաստվում եր վերջին մահվան թռիչք դործե-
լու: 20-րդ հրաց. ղեկիզիան ընկ. Բուդյոննու հեծյալ
բանակի հետ վերջնականապես ջախջախեց նրա գլուխը:
Այդ յերկու կռիվները կյանքի և մահվան հարց էին վոչ
թե միայն թշնամու, այլև մեզ համար:

Այդանգի պարտությունը մեզ համար կնշանակեր
ջարդվել վերջին հաղթական հարձակումից հետո, և հետ

դառնալ Մանըչ, ինչպես 1918 թ., կամ թե վերջացնել
հաղթանակով կռվի այդ դժվար ուղին Դենիկինի դեմ:

Յեվ զրա համար ել այդ կռիվները խոշոր նշանակու-
թյուն ունեցան մեր բանակի և այն հերոսների համար,
վորոնք մասնակցում էին այդ կռիվներին:

ՅԵԳՈՐԼԻԿՍԿԱՅԱ ՅԵՎ ԱՏԱՄԱՆ-ՅԵԳՈՐԼԻԿՍԿԱՅԱ ԿԱՅԱ- ՐԱՆՆԵՐԸ

Ջարդված հակառակորդը կռվելով նահանջում եր. ընկ.
Բուդյոննու հեծելազորքը վոչնչացրեց հակառակորդի Կու-
բանի կորպուսը Բելի Գլինայում, նախորդ կտրելով
նրանց նահանջելու ճանապարհը: Հակառակորդը, մեր հը-
զոր բուռնցքը վոչնչացնելու նպատակով, իր ամբողջ բա-
նակը հավաքեց ի մի և հարձակվեց մեզ վրա Ռոստովի
տակ: Մենք արդեն զգացինք նրանց մեր թևում և ստիպ-
ված էինք դադարեցնել առաջանցումը:

Փետրվարին մեր խմբերը առաջ անցան Յեգորլիկ-
սկայա կայարանի ուղղությամբ և 10 վերստի վրա պա-
տահեցին հակառակորդի բանակին, վորը իր ամբողջ հե-
ծելազորքով հարձակվեց մեզ վրա:

Այս կռվում թշնամին ջարդվեց և փախավ, թողնելով
ավար 29 թնդանոթ, 100 ից ավելի գնդացիներ, ահագին
պաշար և շատ սպանված ու վիրավորված: Պետք եր նրան
վերջնականապես վոչնչացնել: Ըստ տեղեկությունների, նա
իր զորքը խմբավորել եր Ատաման-Յեգորլիկսկայա-Իովայո-
կայա կայարաններում, 3 հեծյալ գունդ, սպասելով դար-
ձյալ 2 հեծյալ ղեկիզիայի մեզ վերջնականապես խեղդելու
նպատակով:

Մարտի 1-ին 20-րդ հրաց. ղեկիզիան և ընկ. Բու-
դյոննու բանակը շարժվեցին դեպի Ատաման-Յեգորլիկ-
սկայա ստանիցան:

Հեծելազորի և հետևակ զորքի առաջին գրոհը ան-
հաջող անցավ. հետևակ զորքը կանգ առավ, իսկ հեծելա-

գունդը մի անհաջող հարձակումից հետո սկսեց հետ նահանջել: Հակառակորդը գրավեց մեր հետևակ գնդի թևը, հետևակ գունդը չդիմադրեց, փորովհետև հակառակորդը նրան ողակի մեջ եր ձգել: Սկսվեց կատաղի կռիվ: Յերկրորդ գրոհով, չնայած մեծ կորուստների և կատաղի դիմադրության, նույն իսկ բնակչության, նրանց թվում նաև կանանց կողմից, հետևակ գունդը քիչ առաջ շարժվեց, իսկ հեծելագունդը այստեղ հաջողությամբ չուներ հաջողություն:

Միայն դիշերվա մի գրոհով և փողոցային կռիվներով ստանիցայում, 20-րդ դիվիզիան գրավեց ստանիցան, փոքր պաշտպանվում եր բարիկադներով: Հակառակորդի մի քանի մասերը հեռացան միայն առավոտյան: Այդ Դենիկինյան Ֆրոնտի մահվան վերջին շունչն եր, և դրա հետ միասին ամենալարված կռիվը այդ Ֆրոնտում:

Հակառակորդի զորամասերը հալվում և ցրվում էին մեկը մյուսի հետևից: Կուբանցիները գնում էին իրենց տները, և հետագա կռիվները Տիխարեցկայա և Լադոսկայա կայարաններում այլևս այնպիսի կատաղի բնույթ չէին կրում: Դենիկինի հետ դործը վերջացավ:

Մեր փոքրաքանակ դիվիզիաները արդեն ձուլվում էին մեկը մյուսի հետ. 20-րդ հրաց. դիվիզիան յերբեմն բազմաթիվ, այժմ շատ սակավաթիվ հերոսներից կազմված, հետզհետե ստանում եր լրացուցիչ զորքեր, և այդ նոր կազմակերպված զնդերը պատրաստվում էին նոր կռիվ՝ սև արյան մայրաքաղաք Բազուի համար, ուր բանվորները սպասում էին մերոնց մայիսի 1-ին: Մայիսի 1-ը Դիվիզիան տանեց պրոլետարական Բազուում:

ՎԵՐՋԻՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Ռազմական աշխատանքը Անդրկովկասում այդ վերջին շրջանն է Դիվիզիայի արյունալի տանջանքների: Դրան ականատես էին բոլորը և այդ պակաս նշանակու-

թյուն չունի, քան Դենիկինի և Կոչակի դեմ կռիվները: 20-րդ Դիվիզիայի զենքը Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի Խորհրդային հանրապետությունները վերականգնելու և հաստատելու մեջ շատ մեծ և վճռողական դեր խաղաց. այդ մասին զիտեն թե մեր բարեկամները և թե թշնամիները:

1920 թվականին ամբողջ Ադրբեջան, խաների և բեկերի ապստամբությունը Գանձակում, յերկար կատաղի, փողոցային կռիվներից հետո, ճնշված եր, շնորհիվ Դիվիզիայի: Գանձակի կենտրոնում գտնված յեղթայրական գերեզմանները հիշեցնում են այդ դեպքերը: Ադրբեջանից հետո - Հայաստանը դիվիզիան սգնեց Հայաստանի աշխատավորությանը, դեն շարտեց դաշնակցականների կառավարության: Ընդը բարձրացավ Խորհրդների Կարմիր դրոշը: Մեր բանակի ամենադժվար մոմենտին դաշնակցականները մի մի փորձ ևս արին, նորից տեղ դառնալու Հայաստանին, բայց մերոնք ճնշեցին այդ, և մի քանի ժամանակից հետո Դիվիզիան, իր Կարմիր դրոշը բարձր պահած, բարձրացավ Զանգեզուրի սարերը:

Վրաստանում 20-րդ Դիվիզիան Թիֆլիսի հարվածային խմբերի կորիզն եր հանդիսանում. վեց ուղի կրում Կոջորի բարձունքների վրա դեն շարտեց մի հարվածով մենշևիկներին և հաստատեց Խորհրդային իշխանությունը: Թիֆլիսի կենտրոնում Կոմունարների այդուրենկերական գերեզմանները հիշատակ են այդ անցքերի:

Այժմ դիվիզիան գտնվում է խաղաղ պայմանների մեջ իր լրիվ կազմով, բայց նա զարձալ չի հանգստանում: Նա լինելով արթուն պահակ Խորհրդային յերկրների խաղաղ շինարարության, մի կողմից պաշտպանում է մուսոքերը դեպի արևելք, մյուս կողմից Բազուի նավթը և Անդրկովկասի յերկրները, միաժամանակ նա տանում է խոշոր դաստիարակչական աշխատանք 20-րդ դիվիզիայի յերկրասարդների մեջ, դաստիարակելով նրանց դիվիզիայի հերոսական անցյալով:

Դիվիզիայի տարեգարծի որը ցանկանում ենք ան-
վերջ յեռանդ ու հաջողութիւն կտմ. հրամանատարներին,
քաղղեկներին և հերոս Կարմիր բանակայիններին՝ այդ
դործում ի սարսափ թշնամու:

Կեցցե 20-րդ—Կովկասյան 3-րդ Հասցանաձիգ Դի-
վիզիան:

(97)

2073

ՀՀ Ազգային գրադարան



1605 NL0049212

